ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Մարտի 22-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Հրաչ Սիլվանյանը այցելեցին Սամցխե-Ջավախքի նահանգ: Այցի նպատակն էր Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայության հետ միասին անցկացնել Սուրբ Զատիկի տոնը:

Ախալցիխեում մեծարգո հյուրերին դիմավորեցին Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը, Սամցխե-Ջավախքի նահանգապետի տեղակալ Սամվել Հովեյանը, Ախալցիխեի շրջանային ժողովի նախագահի տեղակալ Արամ Պողոսովը և երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Տեղ հասնելուն պես հյուրերը ուղևորվեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր Ախալցիխեի շրջանի հոգևոր հովիվ Տ. Մանուկ քահանա Զեյնալյանը մատուցեց ճրագալույցի Սուրբ Պատարագ: Պատարագի ավարտին հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Զատկական ուղերձը, որից հետո Վիրահայոց թեմի առաջնորդը Սուրբ Հարության տոնի առիթով իր հայրական պատգամն ու օրհնությունը տվեց Ախալցիխեի հայությանը: Ապա հավատավոր ժողովրդին ողջունեց ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը:

Պատարագից հետո հյուրերը հրավիրվեցին Զատկական տոնական ընթրիքի:

Ուշ երեկոյան պատվիրակության անդամները մեկնեցին Ախալքալաք:

Մարտի 23-ի առավոտյան Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը այցելեցին Ախալքալաքի շրջանային վարչություն, ուր հանդիպեցին շրջանային ժողովի նախագահ պարոն Խաչատուր Այվազյանին, շրջանային վարչության նախագահ պարոն Հարություն Հովհաննիսյանին և շրջանի կրթական ու մշակութային բնագավառի ղեկավարներին: Հանդիպմանը ներկա էին Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը, Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նարեկ քահանա Ղուշչյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Համլետ Մովսիսյանը, Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի նահանգապետի տեղակալ Սամվել Հովեյանը:

Հանդիպմանը շրջանի ղեկավարությունը ներկայացրեց այս տարվա սոցիալ-տնտեսական, շինարարական և ճանապարհաշինական ծրագրերը: Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը ողջունեց շրջանում ձեռքբերված հաջողությունները և Վրաստանի կառավարության շոշափելի ներդրումները տարածաշրջանի զարգացման գործում: Շրջանի պատասխանատուների ուղեկցությամբ դեսպանն ու առաջնորդը այցելեցին Ախալքալաքում կառուցվող կաթի վերամշակման գործարան և նորակառույց սպորտդահլիճ: Ապա ուղևորվեցին Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի, ուր Զատկական Պատարագ մատուցեց Տ. Նարեկ քահանա

Ղուշչյանը: Պատարագի ավարտին հոգևոր դասը կատարեց Զատկական ձվերի, քաղցրավենիքների, գինիների օրհնություն, ապա Հոգեշնորհ Հայր Բաբկենը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Զատկական պատգամը, որի ավարտին հավատացյալ ժողովրդին շնորհավորանքի և ողջույնի իրենց խոսքերը ուղղեցին թեմի առաջնորդը և դեսպանը:

Օրվա երկրորդ կեսին Ախալքալաքի շրջանի ղեկավարության ուղեկցությամբ պատվիրակության անդամները այցելեցին Նինոծմինդա, որտեղ Սուրբ Սարգիս եկեղեցու բակում նրանց դիմավորեցին շրջանի հոգևոր հովիվ Տ. Արմաշ քահանա Պողոսյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, շրջանային ժողովի նախագահ Ստեփան Երանոսյանը, շրջանային վարչության նախագահ Սուրեն Մոսոյանը, շրջանի մշակույթի և կրթության բնագավառի պատասխանատուները: Սուրբ Սարգիս եկեղեցում հավաքված հայորդիներին նույնպես շնորհավորանքի խոսքեր ասացին Հայր Բաբկենը, Վազգեն Սրբազանը և դեսպան պարոն Հրաչ Սիլվանյանը: Ապա շրջանի ղեկավարության առաջնորդությամբ հյուրերը այցելեցին շրջանային վարչություն, ուր ներկայացվեց 2008 թ. գործունեության ծրագիրը: Դեսպանը բարձր գնահատեց տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքները և հույս հայտնեց, որ Վրաստանի կառավարության աջակցությամբ հնարավոր կլինի կամաց-կամաց հաղթահարել սոցիալ-տնտեսական և կրթա-մշակութային խնդիրները: Նինոծմինդայում ևս հյուրերը այցելեցին նորակառույց սպորտդահլիճ: Վիրահայոց թեմի առաջնորդի և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի այցը Սամցխե-Ջավախք ուշ երեկոյան ավարտվեց Նինոծմինդայում: Այցը տարածաշրջան մեծ ոգևորություն առաջացրեց ազգաբնակչության մոտ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ